
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՇԱՊԱՄԱՐՏԻ ԵՐԿՈՒ ՀԱԿԱԴԻՐ ԿԵՐՊԱՐՆԵՐ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1. Ազաթանգեղոսի մոտ (§ 127) Տրդատ արքայի խոսքում ասվում է՝ «քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ»: Ուրեմն, քաջը Վահագնի մակդիրն է՝ նա է երկրային քաջերի դիցաբանական անձնավորումը և առաջնորդը: Իսկ քաջերը միայն քաջ ռազմիկները չեն: Այդպես է կոչվում և առասպելական արարածների մի ամբողջ դաս, նոր հայերեն՝ քաջքեր¹: Բանահյուսական պատկերացումները միարժեք չեն, և քաջքերը, շատ առումներով, կարծես նույնական են վիշապներին ու չար ոգիներին՝ չարքերին: Բայց հնում այդպես չի եղել: Եղած նյութի հիման վրա հնարավոր է հետևյալ վերակազմությունը:

Հնդեվրոպական հասարակություններում էական դեր են կատարել սովորաբար գերմանական Männerbund տերմինով կոչվող, իրենց աստծու և իրար հետ երդումով կապված որսորդ-ռազմիկների ծիսական հրոսակախմբերը, որոնց վայրի, դիվական հատկանիշներ են վերագրվել: Մրանց առասպելաբանական արտացոլումներն են, օրինակ, հնդկական Ինդրա և Ռուդրա աստվածների հետևորդ մարուտները և ռուդրաները, սկանդինավյան Օդինի անդրաշխարհիկ զորքը՝ էյնհերիները, իռլանդական Ֆիննի որսորդ-ռազմիկների խումբը՝ ֆիանան և այլն²: Մեծագույն Քաջը՝ Վահագնը, պիտի լիներ առասպելական քաջ(ք)երի աստվածային առաջնորդը (ինչպես, ասենք, Ռուդրան՝ ռուդրաների)³:

Վահագնը կոչվում-հաղթում է վիշապներին (Խորենացի Ա. լա) և նրա մակդիրն է վիշապաբաղ (Ազաթանգեղոս, § 809): Ուրեմն, առաջին Քաջը և նրա հետևորդ քաջերը վիշապների հակառակորդներն են⁴: Ապա, վիշապներին հաղթել-սպանել են

¹ Քաջքերի վերաբերյալ տե՛ս Դ. Ա լ ի շ ա ն. Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 191-197, Մ. Ա ր է դ յ ա ն. Երկեր, հ. Ե, Երևան, 1975, էջ 85-89, հ. Ը, Երևան, 1985 էջ 193-196, Լ. Ա. Ա Բ ր ա մ յ ա ն. Первобытный праздник и мифология. Ереван, 1983, с. 143-146.

² Հնդեվրոպական Männerbund-ի վերաբերյալ տե՛ս K. K e r s h a w. The One-eyed God: Odin and (Indo-) Germanic Männerbünde.– Journal of Indo-European Studies. Monograph Number 36. Washington D.C. 2001. Քաջքերին մարուտների ու նման կերպարների հետ համեմատել է Մ. Արեղյանը. տե՛ս Մ. Ա ր է դ յ ա ն. Երկեր, հ. Ե, էջ 85-89:

³ Հնդեվրոպական Männerbund-ի հայկական առասպելաբանական արտա-ցոլումների վերաբերյալ տե՛ս Ա. Պ է տ ր ո ս յ ա ն. Հայոց ազգածագման հարցեր ավանդական տվյալների քննության լույսի տակ.– ՊԲՀ, 2003, № 2, էջ 190-198: Հետաքրքիր է, որ ուրարտական դիցաբանից էլ հայտնի են գերագույն աստված Խալդիի, ամպրոպային Թեյշեբայի և, թերևս, արևի աստված Շիվինիի զորքերը. տե՛ս Մ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 29:

⁴ Հատկանշական է, որ հնդեվրոպական առասպելներում հնդեվրոպական վիշապամարտիկ հերոսները հաճախ կոչվում են քաջ-ին հոմանիշ *Hner- «առնական, արի» մակդիրով. տե՛ս A. P e t r o s y a n. The Indo-European *H₂ner(t)-s and the Danu Tribe.– Journal of Indo-European Studies. Vol. 35,

«քաղելով»: Իրոք, հին ու նոր ժողովրդական լեզվում վիշապամարտը պատկերացվում է որպես վիշապներին ներքևից՝ երկրից երկինք քաշել-հանելու գործողություն⁵: Ընդհանրապես, վիշապամարտը հիմնականում կենտրոնացած է ամպրոպի աստծու շուրջը, բայց և այնպես այն բնորոշ է նաև այլ աստվածների ու աստվածությունների, որոնք, այդ դեպքում, համադրվում են ամպրոպի աստծու հետ: Վահագին հաճախ ամպրոպային հատկանիշներ են վերագրում, բայց նա, դատելով եղած նյութից, ունեցել է նաև արևային աստծու հատկանիշներ⁶: Որպես արևային հնագույն վիշապամարտի մի ուշ բանահյուսական անդրադարձ ներկայացնենք Գ. Մրվանձտյանցի գրառումը. «Վանա պառավներուն մեկ վեպը կա թե՛ վիշապը երբ հազար տարեկան լինի, շատ սարսափելի կը մեծնա. հրեշտակները երկինքեն կիջնեն, շղթայով կը կապեն ու կը քաշեն վեր, այնքան կբարձրացրնեն մինչև արևուն մոտ հանելով, ուր կիզիչ հուրը կը վառե ու մոխիր կը դարձնե զայն»⁷: Ըստ համընդհանուր առասպելաբանական պատկերացումների՝ երկինքը և բարձունքները բնակեցված են երկնային աստվածներով ու աստվածություններով, երկիրը՝ մարդկանցով ու կենդանիներով, իսկ ստորին աշխարհը՝ անդրաշխարհի աստվածություններով, օձերով, վիշապներով, հրեշներով և այլ քթոնիկական արարածներով: Մասիսը, ըստ առասպելների, բնակեցված է քաջքերով ու վիշապներով (կամ սրանց նույնական վիշապագուններով): Սրանցից վիշապները, ակնհայտորեն, պիտի տեղայնացվեն ներքևում: Հայոց հնագույն վեպում («Վիպասանք») Արտաշես արքան, անիծելով իր որդի Արտավազդին, ասում է (Խորենացի, Բ. կա).

Եթե դու յորս հեծցիս,
յԱզատն ի վեր ի Մասիս,
զքեզ կալցին քաջք, տարցին
յԱզատն ի վեր ի Մասիս.
անդ կայցես, և զլոյս մի տեսցես:

Դատելով Խորենացու մոտ բերված Գողթան երգիչների երգած հատվածներից, Արտաշեսի մշտական մակդիրն է եղել քաջ (մեկ անգամ էլ կոչվում է արի)⁸: Հասկանալի է նաև, որ Արտավազդին քաջքերը բռնում են որսի գնալիս, ինչը հիշեցնում է գերմանական առասպելական Männerbund-ի տիպական մի դրվագը՝ «վայ-

2007, 3 & 4; Ա. Պ ե տ ը ո ս յ ա ն. Հայկի և Բելի առասպելի հնդեվրոպական գուգահեռները. պատմական վերակազմություն. – ՊԲՀ, 2009, №1, էջ 50–70:

⁵ Ա. Հ ա ը թ յ յ ու ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 84-91:

⁶ Այսպես, «Վահագնի երգում» ասվում է, որ նրա «աչկունք էին արեգակունք» (Խ ո ը ն ա գ ի Ա. լ ա), իսկ որոշ թարգմանական գործերում նա ուղղակիորեն նույնացվել է Ապոլոնի և արեգակի հետ. տե՛ս հատկապես Գ. Մ ո ը ը ա ղ յ ա ն. Օտար անունների արտահայտությունները հունարան թարգմանություններում.– «Աշտանակ», 1995, 1, էջ 155, 157:

⁷ Գ. Մ ը վ ա ն ձ տ յ ա ն ց. Երկեր, հ. I, Երևան 1978, էջ 69:

⁸ Հմմտ. «Քեզ ասեմ այր քաջ Արտաշես...», «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշես...», «Հեծաւ արի արքայն Արտաշես...» (Խ ո ը ն ա գ ի Բ. ծ):

րի որսը»⁹: Արտավազըր երկակի կերպար է, ն՛ դրական, ն՛ բացասական հատկանիշներով՝¹⁰ նա իր մեջ ամփոփում է ն՛ վիշապամարտիկի և՛ վիշապի հատկանիշներ: Բայց նրա նախնական կերպարը բացասական է՝ նա դև-վիշապ է, իրանական առասպելաբանության մեջ Դեմավենդ լեռանը շղթայված Աժի Դահակայի հայկական համապատասխանությունը¹¹: Նրան անիծում է «քաջ» Արտաշեսը, ինչի հետևանքով նրան կործանում են քաջքերը: Վերջիններս, նրան վերացնելու համար, տանում են վեր՝ դեպի լեռան գագաթը, որտեղից նա պիտի նետվի ցած ու շղթայված պահվի Մասիսի վիհում, մի քարայրի մեջ: Այստեղ, ուրեմն, քաջքերը համապատասխանում են Սրվանձոյանի գրառած լեգենդի հրեշտակներին, այսինքն՝ երկնային էություններին: Մյուս կողմից, հատկանշական է, որ երբ Արտավազըր կովում է վիշապների դեմ՝ այսինքն, հանդես է գալիս վիշապամարտիկի դերում, ինքն է անվանվում «քաջ» (Խորենացի, Ա. լ, Բ. ծա): Այսպիսով, նրա շղթայում-արգելումը Մասիսի քաջքերի կողմից կարող է նույնացվել (քաջ) Վահագնի և վիշապների հակադրությանը: Առկա է միայն իրադրության որոշակի շրջված պատկեր: Մի դեպքում միայնակ Քաջը՝ Վահագն է կովում-հաղթում բազմաթիվ վիշապներին, մյուսում՝ երբ քաջ Արտաշեսն անիծում է Արտավազին, բազմաթիվ քաջ(ք)երը հաղթում-շղթայում են այդ միայնակ «վիշապային» հերոսին:

Քաջ Վահագն	վիշապներ
Քաջ Արտաշես, քաջքեր	«վիշապային» Արտավազ

Ըստ եղած լավագույն մեկնաբանության, քաջ բառի նախնական իմաստն է «լավ, ընտիր», որից զարգացել են մյուս նշանակությունները: Այդպես են կոչվել և դներն ու ոգիները՝ մեզանե լավեր¹²: Ընդ որում, քաջ «լավ, ընտիր» բառի համար ընդունված ստուգաբանություն դեռևս չի առաջարկվել: Հաշվի առնելով վերևի քննարկումը, բառի ծագումը կարող է փնտրվել հնդեվրոպական ռազմիկների խմբերին առնչվող հասկացությունների շրջանակներում:

Հնդեվրոպական համատեքստում հայկական Վահագնին առավել մոտ կերպարը հնդկական ամպրոպի աստված Ինդրան է: Ինդրան իր հիմնական առասպելում հաղթում է Վրտրա օձ-վիշապին և այդ պատճառով հաճախ կոչվում է Vṛtrahan «Վրտրային սպանող» մականունով. այդպես է կոչվել նաև այն, ինչ հաղթական է իր բնույթով՝ օրինակ, Ագնի, Սումա, Սարասվատի աստվածները: Այս կերպարի իրանական գուգահեռներն են ավեստ. Vərəθraγna -ն, հին պրսկ. *Varθragna-ն կամ

⁹ «Վայրի որսի» վերաբերյալ տես K. K e r s h a w. Նշվ. աշխ, էջ 20 հտն. և այլուր:

¹⁰ Մ. Ա բ է դ յ ա ն. Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 146-148, հ. Ը, էջ 188-189:

¹¹ Արտավազի և նրան գուգահեռ կովկասյան ու այլ կերպարների նախնական բացասական՝ «վիշապային» բնույթի վերաբերյալ տես L. A b r a h a m i a n. Hero Chained in a Mountain: on the Semantic and Landscape Transformations of a Proto-Caucasian Myth. “Aramazd”.– Armenian Journal of Near Eastern Studies, 2006, 1, p. 210 ff.

¹² Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 555, տե՛ս և Մ. Ա բ է դ յ ա ն. Երկեր, հ. Ե, էջ 86:

*Vr̥hagna-ն, պարթև. *Varhragn-ը, որից է ծագում հենց Վահագն անունը¹³: Ապա, վաղուց ի վեր նկատված է, որ «Վահագնի երգի» լավագույն, ակներև զուգահեռներն ի հայտ են գալիս հնագույն հնդկական հիմներում՝ Վեդաներում¹⁴: Իսկ Վահագնի ուղեկցորդ քաջերի լավագույն զուգահեռները մարուտները և ռուդրաներն են (սրանք երկուսն էլ հաճախ հանդես են գալիս որպես Բնդրայի զորքեր):

«Ռիզվեդայում» Բնդրան և մարուտները բազմիցս կոչվում են sva- «ինքն-» նախածանցով կազմված ածականներով, օրինակ՝ svayuh, svarāj, svayaśastarah, svakshatra, stavatas, svabhānu, svapati: Սրանցից առավել հետաքրքիրն է swadhā-ն, որին վերագրում են հետևյալ նշանակությունները՝ «որակ, բնույթ, սեփական կամք»¹⁵: Ռիզվեդայում այն ի հայտ է գալիս մոտ վաթսույն անգամ, որոնց մեկ երրորդը՝ Բնդրայի կամ մարուտների վերաբերյալ: Ակնհայտ է, որ Բնդրայի և մարուտների swadhā-ն ռազմական է: Հնդեվրոպական համատեքստում svadhā-ն մեկնաբանվում է ըստ *swe- «սեփական, յուրային» + *dheH- «դնել, հաստատել» արմատների: Այս բառին, ի թիվս այլոց, նաև «տոհմակիցների խումբ» նշանակությունն է վերագրվում, որի ստուգաբանական զուգահեռն է լատ. sodalis-ը՝ «ընկեր, խմբի անդամ», այսինքն՝ «յուրային, ազգակից»¹⁶: Վերոհիշյալ տերմինները հիշեցնում են հայ. քաջ-ի տարբեր իմաստները՝ «լավ, ընտիր», «մարուտների տիպի դիցաբանական ռազմիկների դաս», ապա և նրանց հատկանիշը՝ «արի, խիզախ»:

Հնդեվրոպական *sw-ն հայերենում կանոնավոր կերպով դառնում է ք (հմմտ. օրինակ քուն < *swopno-): Ըստ այդմ, քաջ տերմինը կարող է մեկնաբանվել որպես հնդ. swadhā-յի մի զուգահեռը (թերևս *-y- պարունակող ածանցով, ինչի հետևանքով վերջին բաղաձայնը քնայնանալով վերածվել է ջ-ի): Մյուս կողմից, հայերենում դժվար է բացատրել բառի ա ձայնավորը: Տեսականորեն կարելի է պատկերացնել, որ քաջ-ը հնագույն փոխառություն է հին հնդկական մի բարբառից (ասենք՝ «միջագետքյան», կամ «միտաննիական արիացիների» լեզվից), որտեղ dh-ն ընկալվել է կամ հետագայում դարձել է ջ, իսկ բառավերջի հիմքը դարձել է ի¹⁷:

2. Վիշապը իրանական փոխառություն է: Որոշ հանգամանքներ թույլ են տալիս պարզել և ստուգաբանել վիշապի հին հայկական անվանումները: Օձ-վիշապի հնդեվրոպական անունը, կարծում են, կոդավորվել է *wel- արմատով¹⁸: Սրա հայկական արտացոլումներից մեկն է ազգածին ավանդության Գեղամ անունը (*wel-ի

¹³ Sku В. Н. Т о п о р о в. Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции.– ИФЖ, 1977, № 3, с. 99; Encyclopaedia Iranica. V. II, London-Boston-New York, p. 459.

¹⁴ Н. О. Э м и н. Вахагн-Вишапакаха՝ армянской мифологии есть Индра-Vritrahan Риг-Веды. – Исследования и статьи Н. О. Эмина. М., 1886, с. 82–83.

¹⁵ Այս հարցի վերաբերյալ տե՛ս հատկապես G. D u m é z i l. The Destiny of the Warrior. Chicago – London, 1970, p. 62–63.

¹⁶ Այս տերմինի վերաբերյալ տե՛ս օրինակ՝ J. P. Mallory and D. Q. A d a m s. Encyclopedia of Indo-European Culture. London, Chicago 1997, p. 143, 631.

¹⁷ Վահագնի առասպելում հնդարիական տարրի վերաբերյալ լայնածավալ գրականություն կա. տե՛ս օրինակ՝ G. Y. A r e s h i a n. Armenian and Indo-European Cosmogonic Myths and Their Development. – Proceedings of the Fourth International Conference on Armenian Linguistics. Delmar, New York, 1992.

¹⁸ В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Исследования в области славянских древностей, с. 31.

Արգամը ծագումով մարացի է համարվում)²²: Իսկ Արգամ ձևը հիշեցնում է ազգա-
ծին ավանդության հերոսների անունները՝ Արամ, Գեղամ, որտեղ նույնիսկ օտար
անունները արհեստականորեն համապատասխանեցվել են նրանց, հմմտ. Շամի-
րամ, Բարշամ (ծագում են, համապատասխանաբար, օտարալեզու Շամուրամնատ
և Բաալշամին ձևերից): Այսպիսով, Արգամ անունը կարող է կազմված լինել այն
նույն սկզբունքով, ինչ հնդեվրոպական օձ-վիշապի անվան մյուս հայկական ար-
տացոլումը՝ Գեղամը²³:

Արգամ / Արգաման անունն արդեն համադրվել է «Բառգիրք հայոցի» արգաղայ
«օձ» բառին: Վերջինս կարող է մեկնաբանվել որպես արգել-ի մի տարբերակ, հնդ.
Վրտրա հրեշի անվան մի զուգահեռ: Մյուս կողմից, արգաղայ «օձը» անբաժանելի է
թվում հունարեն անհայտ ծագման *argēs, argas* «մի տեսակ օձ» բառից²⁴:

Հնդեվրոպական առասպելաբանության մեջ *Harg՝ «սպիտակ, փայլուն» արմա-
տը հանդես է գալիս տարբեր հերոսների անուններում (օրինակ, հուն. Արգոս, հնդ.
Արջունա): Հաճախ այդ կերպարները հակադրված են լինում «սև» հերոսներին: Այդ

²² Արգավանի իրանական ստուգաբանության վերաբերյալ տե՛ս հատկապես J. Russell. Argawan: the Indo-European Memory of the Caucasus.– Journal of Armenian Studies, vol. VIII, 2006, 2, p. 138–139.

²³ «Վիպասանքի»՝ այն հատվածը, ուր ներկայացվում է հայոց արքա Արտաշեսի՝ ալանական արքայադուստր Սաթենիկի հետ ամուսնության, վերջինիս՝ Արգավանին սիրելու, Արտաշեսի հաջորդ Արտավազդի թագավորելու և կործանման պատմությունը, զուգահեռներ ունի օսական և կովկասյան մյուս ժողովուրդների էպոսներում, ուր Սաթենիկին համապատասխան հերոսուհին (Մաթանա, Մաթանեյ և այլ նման անուններով) հանդես է գալիս որպես հերոս նարթերի տոհմի մեծ տիկին կամ նախամայր: Օսական ավանդույթ են անցել նաև հայոց Արտավազդը և քաջքերը՝ Արտավլը/Արտավազ, քաձի, վերջինս՝ ակնհայտորեն վրացերենից (պատմական Արտավազդի առասպելականացման վերաբերյալ տե՛ս Ա. Պե տր ո սյ ա ն. Հայկական ավանդական դրամայի ակունքների շուրջ.– ՊԲՀ, 2006, №2, էջ 272-274): Արգավանը, համարյա նույնական անունով (Argwana), հանդես է գալիս չերքեզական (ադրդական) ավանդույթում, որպես մեծ ու հզոր մի այդ, նարթերի հակառակորդ, որը բռնաբարում է Սաթենայային և պատժվում: Այս վիպական ընդհանրու-
թյունները ակնարկում են փոխադարձ ազդեցություններ, ընդ որում, ազդեցության հիմնական ուղղությունը հայկականից կովկասյանն է: Հատկանշական է, որ Արգավանայի պատումում հանդես է գալիս մի հայ, որը կարողանում է նրան դաշնակից դարձնել նարթերին. տե՛ս J. Colarusso. Nart Sagas from the Caucasus. Princeton – Oxford, 2002, p. 34-43. տե՛ս և J. Russell. Նշվ. աշխ.: Նկատենք, որ Ջ. Կոլարուսոն, ծանոթ չլինելով հայկական նյութին, առաջարկում է Արգավանայի մի անհավանական ստուգաբանություն (էջ 46-47, իբր, կապված հունական առասպելաբանության Գորգոն անվան հետ): Ադրդականին ազգակից արխագական և արագական էպոսներում Արգավանայի հետ համադրելի, բայց ոչ նույնական մի կերպար է Արջխոու/Նարջխոուն, որը հանդես է գալիս որպես մեծ հերոսի հայր և հակառակորդ (այս հերոսի մասին տե՛ս Armenian Epic, p. 170–172): Կա նաև անունների որոշ նմանություն (արջ-ը կարող է լինել արգ-ի քմայնացած տարբերակը, ինչպես Արգամանի տարբերակ է համարվում Արջեանը), բայց դժվար է միարժեքորեն նույնացնել այդ հերոսներին: Հայկական և կովկասյան էպոսների ընդհանուր անունների և կերպարների վերաբերյալ տե՛ս Armenian Epic, p. 118 f., 168; T. Dalalyan. On the Character and Name of the Caucasian Satana (Sat' enik).– “Aramazd”. Armenian Journal of Near Eastern Studies, 2006, 1, p. 239–253; J. Russell. Նշվ. աշխ., N. Gevorgian. On the Ossetic Legend about Art'awyz. – Iran and Caucasus, 2007 (11), p. 101–105.

²⁴ Արգավանի անվան համար այս զուգահեռներն առաջարկել է Ս. Պետրոսյանը. տե՛ս Ա. Պե տր ո սյ ա ն. Հասարակության եռադասության սկզբունքի դրսևորումները Երվանդունյաց Հայաստանում. – ՊԲՀ, 2000, №2, էջ 173:

առասպելների տիպական մի օրինակ է հնդկական Պարաշուրամայի («կացինով Ռամա», *rē-mo- «սև, մուգ» արմատից) հաղթանակը Արջունա Կարտավիրյայի դեմ (Մահաբհարատա III, 115-116): Արամի կռիվը Արգայոս լեռան շրջանում դիտվել է այդ համատեքստում, ընդ որում, Արամ և Արգայոս անունները հանգեցվում են հենց հնդեվրոպական հիշյալ արմատներին: Վիշապների առաջնորդի Արգամ / Արգավան անունը ևս հիշեցնում է այս *Harg' - «սպիտակ» հերոսին, որին հաճախ վիշապային հատկանիշներ են վերագրվել²⁵: Բայց, Արգայոս լեռը Հայաստանում չէ, այլ Կապադոկիայում, և այն հայկական անուն չէ, այլ գալիս է, հավանաբար, խեթական ժամանակներից (խեթ. Harga, նույն «սպիտակ» արմատից)²⁶: *Harg' -ի կանոնավոր հայերեն արտացոլումն է արծ-, հմմտ. արծաթ, արծաձեմ և այլն²⁷: Եթե Արգավան / Արգամ անունը գալիս է «սևի և սպիտակի» հնդեվրոպական առասպելից, ապա այն հանգում է, ի վերջո, մի «կենտրոնային» լեզվի (հմմտ. խեթ. Harga):

Այսպիսով, հնարավոր է պատկերացնել, որ Արգամ / Արգավանը առնչվել է արգ(ել)- արմատի հետ, ստուգաբանորեն, կամ զոնե երկրորդային կերպով իմաստավորվել այդ արմատով, ինչը միանգամայն հասկանալի է առասպելական Օձ-վիշապի որպես «արգելք» ընկալման պարագայում:

ДВА ПРОТИВОСТОЯЩИХ ОБРАЗА
АРМЯНСКОГО ДРАКОНОБОРЧЕСТВА

АРМЕН ПЕТРОСЯН

Р е з ю м е

1. Слово *k'aj'* (кадж) «лучший, храбрый» был эпитетом бога войны Ваагна. Каджами называется также группа духов, которые в древности должны были быть последователями бога Ваагна. Каджи сравниваются с марутами и рудрами, последователями бога Индры в индийской мифологии. Слово *кадж* этимологически сравнимо с индийским *swadhā*, эпитетом марутов.

2. В армянской мифологии Змей-вишاپ преграждает космические воды. Этот образ известен и у других народов – например, в индийской мифологии Змей, противник бога Индры, называется Вритра – «затор, преграда». В древнем эпосе «Випасанк» соперником героев выступает драконид Аргаван/Аргам. Это имя, независимо от реальной этимологии, могло осмысляться в связи с армянским корнем *arg(ēl)*- «затор, преграда».

²⁵ Հնդեվրոպական «սևի և սպիտակի առասպելի» վերաբերյալ տե՛ս Ա. Պետրոսյան. Արամի առասպելը..., Armenian Epic.

²⁶ E. L a r o c h e. Toponymes hittites ou pre-hittites dans la Turquie moderne. – Hethitica, 1985, 6, p. 88–89.

²⁷ Այս արմատի՝ հայկական առասպելաբանության մեջ ունեցած դրսևորումների վերաբերյալ տե՛ս Ա. Պետրոսյան. Արա Գեղեցիկ և սուրբ Մարգիս. հնդեվրոպական աստվածն ու նրա քրիստոնեական հետևորդը. – Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան 2001, էջ 157–159:

TWO OPPOSING FIGURES OF ARMENIAN DRAGON-FIGHTING

ARMEN PETROSSYAN

S u m m a r y

1. The word *k'aj* “best, brave“ was the epithet of the Armenian war god Vahagn. Also, the same term designates a group of (evil) spirits, which in antiquity would have been regarded as the followers of Vahagn. The *k'ajs* have been compared with the Maruts and the Rudras, the followers of the god Indra in Indian mythology. Their name may be etymologized in connection with Ind. *swadhā*, epithet of the Maruts.

2. In Armenian mythology, the Serpent-Vishap blocks the cosmic waters. This figure is known in other traditions as well, e.g., in Indian mythology, the Serpent, adversary of Indra, is called Vrtra – “barrier, obstacle.“ In the ancient epic *Vipasank'*, Argawan/Argam the dragonid figures as the adversary of the heroes. This name, regardless of its real etymology, might have been conceptualised by Arm. *arg(el)*- “barrier, obstacle.“